ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ
ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ, Տ. ԹՈՐԳՈՄԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ՀԱՄՕՐԷՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ
ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Հոգին է կենդանարար». Աւետարանական այս ճշմարտութիւնը մեր օրերին առաւել այժմէական է հնչում ու հրամայական դառնում, երբ մեր հայրենի ժողովուրդը ապրում է փոթորկումը պատմութեան մի նոր զօրաշարժի, հոչակումովը ազատ ու ինքնիշխան հայկական նոր պետութեան:

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին օրհնում է այս հոչակումը, նրանում տեսնելով իրականացումը իր հաւատամքի ու ամրապնդումը իր պատմական առաքելութեան, վասնզի նա իր ժողովրդի հոգևոր ու ազգային ապրումներով լի երազանքներով է կազմավորել իր մարմինն ու հոգին, քրիստոնէական տիեզերականը ստեղծագործօրէն բիւրեղացնելով իր ազգի սահմաններում, դառնալով ազգային Եկեղեցի, Արեւելքի քրիստոնեայ ուղղափառ Եկեղեցիների մեծ ընտանիքում:

Այս փոթորկուած բախտորոշ ժամանակաշրջանում, երբ մեր ժողովուրդը ձգտում է վերարժևորել, իր ինքնութիւնը, երբ որոնում է իր հոգու արմատները, մեր պարտքն ենք համարում ցոյց տալ ճշմարիտ ճանապարհը, որը կարող է մեզ բոլորիս տանել դէպի մեր իրաւ ազգային ինքնութեան ակունքները:

Մեր ժողովուրդը պէտք է լաւ ճանաչի ինքն իրեն, ուղիղ հասկանայ իր հարազատ ազգայինը, եւ արբութեամբ պահի պահպանի ամբողջ ու անաղարտ եւ անմոռաց այն ինչ ստեղծուել ու յօրինուել է դարերի ընթացքում մինչեւ մեր օրերը, եւ այդ ակունքների աւիւնով յագեցած, հոգու նոր թռիչքով ու թարմ ուժերով, համամարդկայինը պայծառակերպելով ազգային ձեւերի մէջ, բեղմնաւորի իր նոր կեանքը, եւ հարստացնի իր ազգային մշակոյթի բազմադարեան գանձարանը նոր վաւերական արժէքներով, նոր խօսք ասելով մեր պատմութեանը եւ համայն աշխարհին:

Մենք՝ հայերս, չպէտք է մեզ շփոթենք այլ հին ժողովուրդների հետ, որոնք իրենց հոգեւոր ու ազգային մշակոյթի ոսկեդարերը ստեղծել են մեզանից շատ դարեր առաջ, ինչպէս օրինակ՝ հրեաները՝ Դաւիթ-Սողոմոնեան շրջանում Քրիստոսից հազար տարի առաջ, կամ հելլէնները՝ պերիկլէսեան դարում, քրիստոսից հինգ հարիւր տարի առաջ: Սուրբ Էջմիածինը՝ մեր Սողոմոնի տաճարն է, մեր ոսկեայ հինգերորդ դորը՝ մեր Պարթենոնն է, Աւարայրը՝ մեր Թերմոպիլէան է:

Այո՛, հարկ է, որ մենք մեզ լաւ ճանաչենք որպէս ազգային մշակոյթ կերտող ժողովուրդ, առանց անշուշտ անգիտանալու նրա պատմական զարգացման նախնական փուլերը, գիտակցելով սակայն, որ քրիստոնէութեամբ է որ նա կատարելապէս կազմաւորուել է որպէս ինքնուրոյն մշակոյթ ստեղծող ազգութիւն:

Պատմութիւնը միայն շարադրանքը չէ անցեալ դէպքերի ու իրադարձութիւնների, այլ մանաւանդ կազմաւորողը ու ամրապնդողը ազգային հաւաքական գիտակցութեան ու ազգային մշակոյթի:

Սրանով չենք քարոզում վերադարձ դէպի միջնադար, չենք քարոզում նոյնութեամբ կրկնութիւնը մեր հին ազգային արժէքների, այլ հրաւէր ենք կարդում այսօր մեր ժողովրդի զաւակներին, յատկապէս երիտասարդ սերունդներին, որ ուղիղ ճանաչելով մեր իրաւ ազգայինը եւ հաւատարիմ մնալով մեր վաւերական ազգային ոգեկանութեան աւանդներին, առաջ ընթանան արդիական նոր արարումներով, յետ չմնալով ժամանակակից աշխարհի առաջընթացից, շարունակելով մնալ հոգեւոր ու մշակութային ինքնատիպ արժէքներ յօրինող ազգութիւն, համամարդկային ապրումների, համամարդկային նոր իդէալների մակարդակի վրայ: Ազգերը քարացած իրականութիւններ չեն, այլ ապրող, շնչող ու մշտապէս զարգացող օրգանիզմներ, հնացածը թօթափող եւ նորը զգեցող:

Արդի աշխարհը հարց է տալիս նաեւ մեզ՝ հայերիս. ի՞նչ էք ներկայացնում դուք այսօր՝ իբրեւ մշակոյթ, իբրեւ գիտութիւն, իբրեւ տնտեսութիւն: Ի՞նչ էք ներկայացնում դուք իբրեւ ուժ ու որակ: Հայաստանը պարտաւոր է պատասխան տալ առանց ողորմութիւն կամ կարեկցանք ապասելու աշխարհից:

Մեր ժողովրդի արարչագործ ճանապարհին, մեր պատմութեան հորիզոնի վրայ մշտապէս ու տիրապէս ներկայ է եղել ու գործել մեր առաքելական Եկեղեցին: Յիրաւի մեր Մայր Եկեղեցին է որ քրիստոսակառոյց Սուրբ Էջմիածնի հովանու ներքոյ, մանաւանդ չորրորդ ու հինգերորդ դարերի ընթացքում, Քրիստոսի Աւետարանի լոյսով շաղախել է հայ ժողովրդի կեանքն ու հոգին, որով բիւրեղացել է նրա ազգային ոգեկանութիւնը, նրա կենդանի հոգին: Քրիստոսի փրկչական խօսքի փայլատակումով ի Հայաստան աշխարհ, հայ ժողովուրդը կատարել է իր աստեղային թռիչքը՝ «Ի

խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, յանգիտութենէ ի գիտութիւն ճըշմարտութեան»:

Մեր ազգային ոգեկանութեան, մեր ազգային գիտակցութեան հիմքերը կերտողներն են եղել՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Սուրբ Մեսրոպ Մաշտոց եւ Սուրբ Վարդան Մամիկոնեան: Այսպէս է, որ աշխարհի պատմութեան հորիզոնի վրայ ծնունդ է առել մի քրիստոնեայ ազգութիւն, մի ինքնատիպ ազգային նոր մշակոյթ, մի նոր ոճ: Ծնունդ է առել մի նոր ազգային հոգեբանութիւն ու բարոյական նկարագիր եւ ազատ ապրելու կամք:

Ազգութիւն՝ նշանակում է՝ հայրենի հող ու ժողովուրդ, մայրենի լեզու, ինքնատիպ մշակոյթ ու ոճ եւ ինքնիշխան գոյատեւելու գիտակցութիւն: Հետեւաբար, այն ինչ մենք հասկանում ենք այսօր ազգութիւն, ազգային ասելով, նրա արմատները գտնւում են մեր քրիստոնէական հաւատքի ու մշակոյթի անդաստանում, աննման ձեւերի մէջ կոթողուած մեր հրաշք ոսկեդարում: Եթէ մենք մի պահ մոռացութեան տանք մեր մայրենի լեզուն, գիրն ու գրականութիւնը, մեր դասական ճարտարապետութիւնը, մեր միջնադարեան նկարչութիւնն ու երաժշտութիւնը, եթէ մոռացութեան տանք Աւարայրից սկիզբ առած ազատատենչ ոգին, եթէ մոռացութեան տանք մեր ժողովրդի քրիստոնէական-բարոյական նկարագիրն ու հոգեբանութիւնը, այդ դէպքում, այն կողմ դէպի ետ, համարեա ոչինչ չի մնայ հարազատօրէն հայկական:

Արդ, մի անգամ եւս հաստատենք, որ առանց քրիստոնէութեան, առանց մեր ոսկեդարի, առանց Աւարայրի, անտարակոյս մեր ժողովուրդը կը զրկուէր իր ազգային էութիւնից, իր ազգային ոգեկանութիւնից:

Փառք մեր Եկեղեցու մեծավաստակ Սուրբ Հայրերին, ու Հոգով ներշընչուած մեր ազգի պանծալի զաւակներին, որոնք կերտեցին յաղթական լոյս կամարը հայ հոգեւոր ու ազգային մշակոյթի, Հայ Եկեղեցու օրհնութեամբ:

Նաեւ մաղթանք, որ մեր ժողովրդի ստեղծագործ հանճարի լոյսը շարունակի ազատօրէն ճառագայթել մեր նոր սերունդների արարումներով: Հայոց ոգեկան աշխարհի երկնակամարի վրայ թող նոր աստղեր վառուեն, յաւերժ ապրելու երազանքներով, պահելու համար մեր ազգին իր բաժինը՝ երկնային արքայութեան հեռու բարձունքներում:

Ազատ ճանապարհ՝ դէպի հոգեւոր ու ազգային նոր արշալոյս ընթացող՝ մեր հաւատաւոր արարչատես ժողովրդին:

Տէր Աստուած զօրութեան, «Զարթո զզօրութիւն քո եւ եկ կեցուցանել զմեզ, դարձո զմեզ, երեւեցո զերեսս քո ի մեզ եւ կեցցուք» զի «որք վարէին արտասուօք, ցնծութեամբ հնձեսցեն»: ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14 փետրուարի
1991 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԽ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1757